ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Սփյուռքի տարածքի վրա ստեղծված բազմաթիվ հայապահպանման օջախների կողքին իր շնորհակալ ու օգտավետ գործն է կատարում ԱՄՆ-ի Հայաստանյայց եկեղեցվո երիտասարդական կազմակերպությունը:

1970 թվականին լրացավ այդ կազմակերպության 25-ամյակը:

Այս առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը Իր օրհնությունը հղեց Ամերիկայի հայ երիտասարդներին 17 հունիս 1970 թվակիր կոնդակով՝ ասելով.

«Մեր պարտականությունն է պատվեր տալ ձեզի, սիրելի երիտասարդներ, որ ձեր սիրտն ու միտքը բանաք հավիտենական ճշմարտություններուն և մնայուն արժեքներուն, որոնց աղբյուրներն են՝ Քրիստոսի Ավետարանը, մեր սուրբ եկեղեցվո ժառանգությունը և մեր ժողովրդի ազգային մշակույթի գանձարանը»:

Այս առթիվ Վեհափառ Հայրապետը ս. Էջմիածին և մայր հայրենիք հրավիրեց ԱՄՆ-ի Հայաստանյայց եկեղեցվո երիտասարդական կազմակերպության մի խումբ անդամների:

Այդ հրավերը դարձավ ավանդական և արդեն 5-րդ տարին է, որ ամերիկահայ երիտասարդները գալիս են մայր հայրենիք և ս. Էջմիածին, իբրև հյուրը Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի:

Այս տարի խումբը բաղկացած էր 24 անդամներից, ղեկավարությամբ տ. Ներսես քհն. Ճեպեճյանի: Խմբին մաս էր կազմում նաև տ. Վրթանես քհն. Գալայճյանը:

Հունիսի 30-ին խումբը այցելեց Մայր Աթոռ ս. Էջմիածին, ծնրադիր ու գլխահակ Վեհափառ Հայրապետը ամերիկահայ եղբոր թելու Մայր տաճարի կամարների տակ: Երիտասարդներին սիրով ընդունեց և բարի գալուստ մաղթեց, որոնք առաջին իսկ առիթով աջահամբույրով ստացան Նրա օրհնությունը:

Խմբի անունից Վեհափառ Հայրապետին ուղղված շնորհակալության և երախտագիտության ջերմ խոսք ասաց տ. Ներսես քհն. Ճեպեճյանը, մայր հայրենիք և ս. Էջմիածին այցելելու իրենց ընծայված այս բարեպատեհ առիթի համար:

Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն մասնավոր դասավանդություններ էր կազմակերպել ամերիկահայ երիտասարդների համար, ավելի հանգամանորեն ծանոթացնելով նրանց մայրենի լեզվին, հայ մշակույթին, ազգային պատմությանը, երաժշտությանը, պարարվեստին:

Դասերից ազատ ժամերին խմբի անդամները եղան նաև Հայաստանի զանազան շրջաններում, այցելեցին պատմական հուշարձանները, վանքերը, հանդիպումներ ունեցան մտավորականների, արվեստի գործիչների հետ:

Հուլիսի 17-ին, կիրակի օրը, խումբը այցելեց ս. Էջմիածին և Վեհափառ Հայրապետին:

Ժամը 11-ին սկսվում է ս. պատարագը: Օրվա պատարագիչն էր տ. Ներսես քհն. Ճեպեճյանը: Ամերիկահայ երիտասարդները ամենայն երկյուղածությամբ հետևում էին ս. պատարագին:

Հաղորդության պահն է: Բոլորը անձկությամբ մոտենում են Ավագ խորանին և ճաշակում Քրիստոսի մարմինն ու արյունը:

Հուլիսի 24-ն է, վերջին օրը: Ամերիկահայ երիտասարդները այցելում են Ծիծեռնակաբերդ և թարմ ծաղիկներ դնում Եղեռնի նահատակների անմահ շիրիմին:

«Կբավե նայիլ այս տողոց ու աղջկանց թաց աչերուն և հասկնալ, որ իրենց սրտեն մասնիկ մը կձգեն հոս՝ հայրենի տան մեջ և հոգիները լեցուցած կվերադառնան իրենց բնակավայրերը,—ասաց հրաժեշտի պահին տ. Վրթանես քհն. Գալայճյանը և շարունակեց,—Երևանը հիմա արդեն այն ժամադրավայրն է, ուր պիտի գանք պարբերաբար լցվելու մեր հայրերուն հոգիով, ներկայի վստահությամբ, շարունակելու պայքարը հանուն սփյուռքի գոյատևման: Անոնք գիտեն հիմա, որ հաջողության ճամփան Երևանեն կանցնի»: